ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» մարտի 2020թ. № 88

ՏԻԳՐԱՆ ՆՈՐԻԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹ-ՍՐՃԱՐԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 14-րդ կետով, 16-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով և 32-րդ կետի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Տիգրան Նորիկի Դանիելյանը 2017 թվականին առանց քանդման թույլտվության՝ ինքնակամ քանդել է սեփականության իրավունքով իրեն պատկանող, Ալ.Մանուկյան փողոցի վրա գտնվող 06-006-0499-0053 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,00391 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող 16,64 քառակուսի մետր մակերեսով մառանը, 5,45 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կառույց լոգարանը, ինքնակամ ձևափոխել է 06-006-0499-0047 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,01595 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա 138,87 հեկտար մակերեսով ինքնակամ կառույց նկուղը և 0,01986 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասի վրա կառուցել է 670,95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով (այդ թվում՝ 138,87 քառակուսի մետր մակերեսով նկուղը) խանութ-սրճարան, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022016-06-0036 և

24032014-06-0024 վկայականները, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Տիգրան Նորիկի Դանիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տիգրան Նորիկի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/1 հասցեում գտնվող 06-006-0499-0047 կադաստրային ծածկագրով 0,01595 հեկտար և Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/2 հասցեում գտնվող 06-006-0499-0053 կադաստրային ծածկագրով 0,00391 հեկտար մակերեսներով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի գործառնական նշանակությունները համարել փոփոխված՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Միավորել Տիգրան Նորիկի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/1 հասցեում գտնվող 06-006-0499-0047 կադաստրային ծածկագրով 0,01595 հեկտար մակերեսով և Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/2 հասցեում գտնվող 06-006-0499-0053 կադաստրային ծածկագրով 0,00391 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասերը՝ համաձայն հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետով միավորված 0,01986 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատկային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 670,95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով խանութ-սրճարանը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Տիգրան Նորիկի Դանիելյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/1» հասցեն:

6. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

7. Տիգրան Դանիելյանին.

1) համայնքի բյուջե վճարել 1 366 574 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

8. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 2

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» մարտի 2020թ. № 89

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ԱՐՏԱՇԵՍ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով և 53-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1075385 վկայականը և Գևորգ Արտաշի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Պողոսյանին, Գայանե Սահակյանին, Արտաշես Պողոսյանին և Վահե Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Կենտրոն-1 թաղամաս, Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող 89,8 քառակուսի մետր մակերեսով բնակարանի «քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 5 շենք, թիվ 7 բնակարան» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Կենտրոն-1 թաղամաս, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 5 շենք, թիվ 7 բնակարան» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» մարտի 2020թ. № 90

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20/1 ՇԵՆՔ, ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 9-Ա որոշումը, Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի կողմից 1992 թվականի դեկտեմբերի 25-ին տրված բնակելի տարածության թիվ 30 օրդերը և Սասուն Միշայի Մաթոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012020-06-0052 վկայական՝ տրված 2020 թվականի հունվարի 31-ին) «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 20/1 շենք, բն. 12» հասցեի 58,41 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 2 սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել՝ Սասուն Միշայի Մաթոսյանին՝ ծնված 1979 թվականին, Հայկուհի Միշայի Մաթոսյանին՝ ծնված 1977 թվականին, Սյուզետա Միշայի Մաթոսյանին՝ ծնված 1983 թվականին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել՝

1) աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Միշա Թամամյանին ապահովել սույն որոշման կատարումը:

2) աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 3
ք.Սպիտակ